ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

« 19 » հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 2794-Ֆ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Զարգանդ Հովհաննեսի Ավետիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N 32567/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Զարգանդ Հովհաննեսի Ավետիսյանի (ՀՎՀՀ՝ 57306957, ՀԾՀ՝ 2303930359, հասցե՝ Շիրակ, Գյումրի,Ավզնոց 43 տուն) չկատարված հարկային պարտավորությունը 15.07.2021թ. դրությամբ կազմել է 579.753 դրամ, որից հարկ՝ 491.150 դրամ, տույժ՝ 88.603 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 30.09.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի ներկայացրել:

ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության կողմից ստացված օտարված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձ Զարգանդ Հովհաննեսի Ավետիսյանի կողմից 2019թ. օտարվել է 2019թ.ձեռք բերված թվով 21 տրանսպորտային միջոցներ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. 29.06.2019 թվականի գործող խմբագրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում հարկային տարվա ընթացքում երկրորդ կամ ավելի թվով ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենաների /առաջին, երկրորդ կամ ավելի թվով/ և ձեռքբերումը և օտարվումը տեղի են ունեցել նույն հարկային տարվա ընթացքում:

բ. 29.06.2019 թվականից գործող խմբագրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից (այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ գույքն օտարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից տարբերվող և հարկային գործակալ չհանդիսացող անձի) ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը, հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Ֆիզիկական անձ Զարգանդ Հովհաննեսի Ավետիսյանի կողմից իրականացված վերը նշված գործարքի մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի կատարվել հարկերի վճարումը:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը եկամտային հարկի գծով 15.07.2021թ. դրությամբ կազմել է 579.753 դրամ, որից հարկ՝ 491.150 դրամ, տույժ՝ 88.603 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից շարժական գույքի օտարման գործարքի արդյունքում և << հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ << հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով << հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» << օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» << օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Զարզանդ Հովհաննեսի Ավետիսյանից գանձել 579.753 դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝ 15.07.2021թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2020թ.	491.150	88.603		579.753	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի
գլխավոր մասնագետ Սյուզաննա Ալեքսանյան
հեռ.010 309191 /9131/